



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

ԹԵՄԱ՝ ՏՈԿՈՍԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ /հիբրիդ դասի մոդել/

ԱՌԱՐԿԱ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆԱՀԻՏ ԿԱՄՈՅԻ ՏԵՐ- ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶ՝ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԹԻՎ 9

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----3**

Չետագոտական աշխատանքի նպատակները-----4

Չետագոտական աշխատանքի խնդիրները-----4

### **ԳԼՈՒԽ 1.ՏՈԿՈՍԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

1.1.Ի՞նչ է տոկոսը,ինչպե՞ս է այն առաջացել-----5

1.2.Տոկոսի ներկայացումը կոտորակների տեսքով-----7

1.3.Տոկոսը գտնելու կանոնները-----8

### **ԳԼՈՒԽ 2.ՏՈԿՈՍԸ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ**

2.1.Ինչպե՞ս սովորել և սովորեցնել-----9

#### **Խաղ- մրցույթ <<ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՄԻԼԻՈՆԱՏԵՐ>>**

2.2.Տոկոսը և մենք-----10

2.3..Տոկոսը և առևտուրը-----11

2.4.Տոկոսը և բիզնեսը-----12

2.5.Տոկոսը և ընտանեկան բյուջեն-----15

**ՖԻՆԱՆԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐ ԵՎ**

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ-----16**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ -----17**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### <<ԹՎԵՐԸ ՉԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ, ԱՅԼ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ

ԵՆ

**ԻՆՉՊԵՍ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԱՇԽԱՐՀԸ>>**

ԳՅՈԹԵ



Ուզում եմ իմ այս աշխատանքը սկսել Գյոթեի նշված խոսքերով, քանի որ կարևորում եմ թվերի դերը մեր կյանքում, հատկապես՝ արտահայտված տոկոսներով: Այսօր ամեն քայլափոխի տեսնում եմ թվեր տոկոսներով արտահայտված՝ խանութների ցուցափեղկերի վրա՝ 30% զեղչ, աշխատավարձի բարձրացում 20 %-ով, ապառիկ վաճառք 0%-ով, գների բարձրացում 8%-ով, տնտեսության աճ՝ 12%, բիզնեսի աջակցում՝ 40%, դիմորդների քանակի նվազում 20%-ով, ընտրությունների մասնակիցների քանակը՝ 80% և այլն: Այդ պատճառով ուզում եմ աշակերտների մոտ (սրանց միջոցով՝ նաև ծնողների մոտ) զարգացնել տոկոսների վերաբերյալ գիտելիքները և դրանք կյանքում կիրառելու հմտություններն ու կարողությունները:

Աշխատանքում ներկայացված են տոկոսի ծագման պատմությունը, տոկոսներ հաշվելու կանոնները և դրանց կիրառությունը առօրյա կյանքում <>տարբեր իրավիճակներում և բնագավառներում: Դիտարկված են գործնական գանազան խնդիրներ և խաղ-մրցույթներ՝ «Ինչպե՞ս դառնալ միլիոնատեր», «Ընտրիր զույգը», 'Ֆինանսական գրագիտություն', իսկ վերջում ներկայացված են առաջարկություններ և եզրահանգումներ :

## **ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

### **Չետագոտական աշխատանքի նպատակներն են՝**

- Սահմանել տոկոսը՝ որպես տարբեր պարամետրերով տվյալների համեմատման միավոր:
- Ցույց տալ տոկոսների վերաբերյալ գիտելիքների օգտագործման անհրաժեշտությունը:
- Երեխաներին սովորեցնել տոկոսային հաշվարկների վերաբերյալ գիտելիքները ինչպես օգտագործել ոչ միայն ուսումնական և ճանաչողական գործընթացում, այլև նաև առօրյա կյանքում:
- Ձևավորել գործնականում անհրաժեշտ տոկոսային հաշվարկներ կատարելու կարողություններ և հմտություններ:
- Աշակերտների մեջ սերմանել տնտեսական գրագիտության հիմունքներ, որոնք իրենց հետ կտանեն նաև դեպի ընտանիք, ընտանիքի մյուս անդամներ, որոնք էլ կնպաստեն ընտանիքի բյուջեի ճիշտ կազմակերպմանը :
- Ցույց տալ, որ տոկոսը մեր կյանքի մշտական ուղեկիցն է:

### **Չետագոտական աշխատանքի խնդիրներն են՝**

- Աշակերտները կարողանան տոկոս հաշվելու կանոնները կիրառել տարբեր հաշվարկներում :
- Կարողանան բացահայտել տոկոսի օգտագործման հնարավորությունները կյանքի բոլոր բնագավառներում՝ իրենց շրջապատում, առևտրի մեջ, բյուջեի արդյունավետ կազմակերպման և ֆինանսական զանանգան բնագավառներում:
- Կարողանան ֆինանսական գրագիտության հիմունքները կիրառելով հասնել ցանկալի արդյունքների:

## Գլուխ 1. ՏՈԿՈՍԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### 1.1. Ի՞նչ է տոկոսը, ինչպե՞ս է այն առաջացել

Վերը նշված նպատակների ու խնդիրների իրականացման համար ներկայացնում եմ հիբրիդ դասի մոդել, որը անցկացրել եմ իմ դասավանդվող դասարաններից մեկում:

#### ԽՁԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Դասարանը նախապես բաժանել եմ 4 խմբի, որոնցից յուրաքանչյուրին տվել եմ առաջադրանքներ՝

**Առաջադրանք 1.** Որոշել խմբի անունը:

**Առաջադրանք 2.** Ըստ իրենց հանձնարարված թեմայի՝ փնտրել համացանցից, լրացուցիչ գրականությունից համապատասխան նյութեր, վերլուծել և ուղարկել ինձ, որպեսզի ես այն տեղադրեմ Padlet ծրագրով նախապես ստեղծված պատին:

**Խումբ 1**-անունը՝ Ծիածան,

**թեման**՝ տոկոսի առաջացման պատմությունը

**Խումբ 2**-անունը՝ Կայծակ,

**թեման**՝ տոկոսը և կոտորակները:

**Խումբ 3**-անունը՝ Էվրիկա ,

**թեման**՝ ինչպե՞ս հաշվել տոկոսը :

**Խումբ 4**-անունը՝ Խելացիներ և հնարամիտներ,

**թեման**՝ ինչո՞ւ և ինչպե՞ս սովորել:

**Առաջադրանք 3.** Մտածել հակառակորդ թիմին առաջարկվող խնդիր տոկոս հաշվելու վերաբերյալ:

**Առաջադրանք 4.** Ընտրել 1 կամ մի քանի բնագավառներ, որտեղ օգտագործվում են տոկոսի վերաբերյալ գիտելիքները:

#### Դասի ընթացքը

Յուրաքանչյուր թիմ ներկայացնում է իր թեման Padlet ծրագրի պատի վրա.

**Խումբ 1. ԾԻԱԾԱՆ**----Տոկոս (լատիներեն՝ per cent հարյուրի վրա), մեկ հարյուրերորդ մաս. Կարճ նշանակումը՝ «%»: % նշանը ստեղծվել է XV դարում,

իտալական ձեռագրերում որպես իտալերեն per cento բառերը կրճատ գրելու արդյունքում՝

pro cento—cento—cto—c/o—%

Տոկոսներով հաշվումներ կատարվում էին դեռևս հին Բաբելոնում: Տոկոսները հատկապես լայն կիրառություն ունեին Հին Հռոմում, որտեղ տոկոսն անվանում էին pro centum (հարյուրից), յուրաքանչյուր հարյուրի դիմաց տրվող լրացուցիչ գումար:

Այն հետագայում լայն տարածում է ստանում նաև եվրոպական շատ երկրներում և հիմնականում օգտագործվում է առևտրային և դրամական գործարքներում: Այնուհետև տոկոսը լայնորեն կիրառվում է նաև այլ ոլորտներում՝ տնտեսության մեջ, ֆինանսական հաշվարկներում, վիճակագրության մեջ, բժշկության և գիտության տարբեր բնագավառներում:

**Հոմանիշներ՝** առհարյուր (արևմտի.) շահ, սակ, բաժին, մաս, մասնաբաժին:

### **Արտահայտություններ՝**

**պարզ տոկոս** - այն տոկոսը, երբ ժամանակի որևէ միավորի ընթացքում (օրինակ՝ մի տարում) առաջացած աճը չի ավելանում սկզբնական թվին և չի մասնակցում նրա հետագա (հաջորդ տարիների) աճմանը,

**բարդ տոկոս** - դրամագլխի վրա բարդվող յուրաքանչյուր տարվա տոկոսը,

հարյուր տոկոսով - լրիվ չափով, ամբողջությամբ, փոխաբերական իմաստով՝ հաստատ




**վաշխառուական տոկոս** - օրենքով սահմանված տոկոսից ավելի բարձր տոկոս

**օրինական տոկոս** - տվյալ պետության մեջ օրենքով սահմանված չափից չանցնող տոկոս

**տոկոսաբեր** - եկամտաբեր, որոշակի տոկոսի չափով եկամուտ

**տոկոսադրույք**-ֆինանսավարկային գործիքի եկամտաբերության ցուցիչ, որը պայմանագրով սահմանված ժամանակաշրջանում վճարված կամ ստացված տոկոսների և տրամադրված վարկերի կամ ավանդների գումարների հարաբերակցությունն է: Այն բնութագրում է ներգրավված կամ տրամադրված

դրամական միջոցների նկատմամբ հատկացված տոկոսագումարների չափը: Տոկոսադրույքն արտահայտվում է հետևյալ նշանով՝ «%» և հաշվարկներ կատարելիս բազմապատկվում է 100-ով:



## ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱՆՄԱՆ ՓՈՒԼ

### 1.2.Տոկոսի ներկայացումը կոտորակների տեսքով

#### Խոումբ 2.ԿԱՅԾԱԿ

Ինչպես արդեն ասվեց թվի տոկոսը թվի մեկ հարյուրերորդ մասն է, որը կոտորակի տեսքով արտահայտվում է այսպես՝  $1\% = 1/100$  մաս, հետևաբար  $100\% = 1$ ամբողջ մաս,  $50\% = 1/2$  մաս,  $25\% = 1/4$  մաս:

Տոկոսը կարելի է արտահայտել նաև տասնորդական կոտորակի տեսքով՝  $1\% = 0,01$  մաս,  $50\% = 0,5$  մաս, իսկ մասը տոկոսով արտահայտելու համար պարզապես անհրաժեշտ է այն բազմապատկել 100-ով՝  $2/5$  մաս  $= 2/5 * 100 = 40\%$

Առաջարկում ենք փոքրիկ խաղ՝ <https://learningapps.org/watch?v=pnoq95ym222>



Գտնել համապատասխան զույգերը

20%	1	0,1
10%	1/2	0,4
40%	1/5	0,6
50%	1/10	1
60%	2/5	0,5
100%	3/5	0,2

### 1.3.Տոկոսը գտնելու կանոնները

#### Խումբ 3. ԷՎՐԻԿԱ

Յիշենք, որ **թվի 1 %-ը նրա 1/100-երորդ մասն է**, հետևաբար՝

**Կանոն 1.** Թվի տոկոսը գտնելու համար պետք է տոկոսը գրել սովորական կոտորակի տեսքով և տրված թիվը բազմապատկել ստացված կոտորակով:

**Օրինակ՝** 300-ի 20 % -ը հաշվում ենք այսպես՝  $300 \cdot (20/100) = 60$  կամ  $(300/100) \cdot 20 = 60$

Շատ հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ որևէ թվի ինչ-որ տոկոսը

գիտենք, բայց չգիտենք սկզբնական թիվը:

**Օրինակ՝** ո՞ր թվի 20% է հավասար 60-ի, այսինքն ո՞ր թիվն ենք բաժանել 100 հավասար մասերի և վերցրել 20 մասը, այդ թիվը գտնելու համար պետք է՝  $(60/20) \cdot 100 = 300$  կամ  $(60 \cdot 100) / 20 = 300$



**Կանոն 2.** Որպեսզի գտնենք , թե ո՞ր թվի  $p$  %-ն է հավասար  $b$ -ի, պետք է  $b$ -ն բազմապատկենք  $100$ -ով և բաժանենք  $p$ -ի՝  $100 \cdot b / p$ :

**Կանոն 3.** Որպեսզի գտնենք , թե  $b$ -ն  $a$ -ի ո՞ր տոկոսն է, պետք է  $b$ -ն բազմապատկենք  $100$ -ով և բաժանենք  $a$ -ի:

Օրինակ՝ գտնենք, թե  $32$ -ը  $40$ -ի ո՞ր տոկոսն է կազմում՝  $(32/40) \cdot 100 = 80\%$ :

## 2.1. Ինչպես սովորել և սովորեցնել

Այժմ փորձենք ստացած գիտելիքները կիրառել պարզագույն խնդիրներ լուծելիս: Առաջարկում է յուրաքանչյուր թիմ :

**Չարցադրում 1.** Ո՞րն է մեծ՝ ա)  $500$ -ի  $30\%$ -ը, թե  $600$ -ի  $20\%$ -ը

բ) Ինչքա՞ն է  $900$ -ի  $25\%$ -ի  $2/3$  մասը

գ) դասարանի  $25$  աշակերտներից  $15$ -ը աղջիկներն են: Դասարանի քանի՞ տոկոսն են կազմում տղաները:

**Չարցադրում 2.** Երկու քաղաքների միջև հեռավորությունը  $450$  կմ է: Մեքենան  $1$  ժամ անցավ ամբողջ ճանապարհի  $20\%$ -ը, ապա մնացածի  $30\%$ -ը: Ընդամենը ինչքա՞ն ճանապարհ անցավ մեքենան:

**Չարցադրում 3.** Տիգրանի ընտանիքի բյուջեն ամսական կազմում է  $300000$  դրամ: Նրանք այդ գումարից ամսական խնայում են  $15\%$ : Քանի՞ ամիս հետո նրանք Տիգրանի համար կարող են գնել համակարգիչ, եթե այն արժե  $230000$  դրամ:

**Չարցադրում 4.** Ապրանքի գինը  $20\%$ -ով բարձրացնելուց հետո ինչքա՞ն դարձավ, եթե սկզբում արժեք  $30000$  դրամ :

Յուրաքանչյուր թիմ, խմբի անդամների հետ քննարկելով, փորձում է լուծել առաջադրանքը և ներկայացնում է լուծման ալգորիթմը, որը համեմատում ենք ճիշտ լուծման հետ, ըստ որի՝ յուրաքանչյուր թիմ ստանում է համապատասխան միավորը՝

**Օմիավոր**, եթե պատասխանը սխալ է, **1 միավոր**, եթե լուծման ալգորիթմը ճիշտ է, բայց կան մասնակի թերացումներ և **2 միավոր**, եթե ճիշտ է լուծումը:

Լուծումներ    Չարցադրում 1. ա)  $500 \cdot 30 / 100 = 150$      $600 \cdot 20 / 100 = 120$      $150 > 120$

բ)  $900 \cdot 25 / 100 = 225$      $225 \cdot 2/3 = 150$     **Պատ. 150**

գ) **Լուծում1.** 1)  $25-15=10$  2)  $(10/25)*100=40(\%)$

**Լուծում2.** 1)  $(15/25)*100=60(\%)$  2)  $100-60=40(\%)$  **Պատ. 40%**

Չարցադրում2. 1)  $450*20/100=90$ (կմ) 2)  $450-90=360$ (կմ) 3)  $360*30/100=108$ (կմ)  
4)  $90+108=198$ (կմ) **Պատ.198կմ**

Չարցադրում3. 1)  $300000*15/100=45000$ (դրամ) 2)  $230000/45000=5,1111... \approx 5$ (ամիս)  
3)  $5*45000+5000=230000$ (դրամ) կամ 3)  $5+1=6$ (ամիս) **Պատ. 5 կամ 6 ամիս հետո**

Չարցադրում 4. **Լուծում1.** 1)  $30000*20/100=6000$ (դրամ) 2)  $30000+6000=36000$ (դրամ)  
**Լուծում2.** 1)  $100+20=120(\%)$  2)  $30000*120/100=36000$ (դրամ) **Պատ. 36000դրամ**

**Խաղ 'Ո՛Վ Է ՈՒՉՈՒՄ ԴԱՌՆԱԼ ՄԻԼԻՈՆԱՏԵՐ'**

<https://learningapps.org/display?v=pi7fjizzn21>

## **2.2 .ՏՈԿՈՍԸ ԵՎ ՄԵՆՔ**

### **Խումբ 4.ԽԵԼԱՑԻՆԵՐ ԵՎ ՋՆԱՐԱՄԻՏՆԵՐ**

Երբ նոր էինք անցնում տոկոսներ թեման, մեզ թվում էր, որ այն զուտ մաթեմատիկական տերմին է և օգտագործվում է միայն մաթեմատիկական ինդիկների լուծման մեջ: Բայց մեծ էր մեր զարմանքը , երբ մի շարք ուսումնասիրություններ արեցինք: Թերթերում կարդում կամ լուրերով լսում ենք տնտեսության աճ 5%-ով, ապրանքների գների աճ 8%-ով, կորոնավիրուսով վարակվածների աճ 10%-ով, պատվաստվածների թիվը հասել է 42% - ի, մահացության թիվը նվազել է 3%-ով, թոշակառուներն ու նպատառուները իրենց քարտով անկանխիկ առևտուր անելու դեպքում 10% հետվճար են ստանում, սեպտեմբերից կբարձրանան թոշակները 7%-ով, զինվորականների աշխատավարձերը `18-20%-ով, կամավոր ատեստացիա անցած ուսուցիչների

աշխատավարձը կբարձրանա 30-50%-ով և այլն:



### 2.3 .ՏՈԿՈՍԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Ամենուրեք մենք նկատում ենք ,որ ապրանքների գներն անընդհատ փոփոխվում են ` կախված ապրանքների պահանջված լինելուց,դուլարի փոխարժեքի տատանումներից,երկրում վարվող տնտեսական քաղաքականությունից ,վաճառողի կամքից և այլ պատճառներից:Դրա հետևանքով ապրանքների գներն իջնում կամ բարձրանում են ,կամ թվում է,թե իջնում են:Այդպես ենք ասում,որովհետև վաճառողները սկզբից ուզում են գերշահույթ ստանալ( գնված գնից շատ բարձր են վաճառում) և զինը բարձրացնում են 50%-ով, հետո տեսնում են` չի վաճառվում ,իջեցնում են 10%-ով,իբրև թե զեղչ են անում,բայց էլի իրենց եկամուտը ստանում են:

Օրինակ, եկեք հաշվենք քանի % շահույթ կունենան,եթե ապրանքը գնել են 4000դրամով,որոշել են վաճառել 50%-ով ավելի,հետո իջեցրել են 20%-ով:

- Լուծում**՝ 1)  $4000 * 50 / 100 = 2000$     2)  $4000 + 2000 = 6000$     3)  $6000 * 20 / 100 = 1200$
- 4)  $6000 - 1200 = 4800$  (դրամ ) 5 ) (  $4800 / 4000$  ) \*  $100 = 120$  (%)
- 6 )  $120 - 100 = 20$  (%)    կամ 5)  $4800 - 4000 = 800$  (դրամ շահույթ)
- 6)  $800 / 4000 * 100 = 20$  (%) շահույթ)    **Պատ՝.20%**

Երբեմն էլ ապրանքաշրջանառությունն արագացնելու և մեծացնելու նպատակով կատարվում են մեծ զեղչեր,կազմակերպվում են, այսպես կոչված, 'սև' ուրբաթներ,բայց նորից պետք է զգույշ լինել,կարողանալ ճիշտ հաշվարկ անել... Օրինակ ,ենթադրենք նույն պայուսակները երկու խանութներում էլ դրված են վաճառքի` մեկում`18000դրամ,մյուսում`20000դրամ:Բայց առաջին խանութում զեղչը20% է,երկրորդում`30%:Ի՞նչ եք կարծում` ո՞ր խանութից է ավելի հարմար գնել:

Լուծում՝ խանութ1  $100-20=80$   $18000*80/100=14400$ (դրամ)  
 խանութ2  $100-30=70$   $20000*70/100=14000$ (դրամ)  $14000<14400$  :  
 Չետևաբար ավելի լավ է գնել երկրորդից, իսկ եթե երկրորդ խանութում լինեք 25%  
 զեղչ, ապա պայուսակը կարծենար՝  $20000*75/100=15000$ դրամ  $15000>14400$   
 հետևաբար ավելի լավ է գնել առաջինից:  
 Այսպիսով, որպեսզի խնայողաբար ծախսենք մեր գումարը, հարկավոր է  
 չգայթակղվել զեղչային տոկոսներով և կարողանալ ճշգրիտ հաշվարկել:

## 2.4. ՏՈԿՈՍԸ ԵՎ ԲԻՉՆԵՍԸ

Ցանկացած բիզնես սկսելու համար որոշակի գումար է պետք: Բիզնեսի ֆինանսավորումը բիզնեսի սեփականատերերի մեծամասնության առաջին և



կարևորագույն ֆինանսական ընտրություններից մեկն է: Եթե ցանկանում եք  
 պահպանել Ձեր բիզնեսի լիակատար վերահսկողությունը, բայց բավականաչափ  
 միջոցներ չունեք սկսելու համար, պետք է հաշվի առնել բիզնեսի վարկատեսակը և  
 պայմանները: Վարկ ապահովելու շանսերը մեծացնելու համար հարկավոր է ունենալ  
 բիզնես պլան, ծախսերի թերթիկ և ֆինանսական կանխատեսումներ: Այս գործիքները  
 կօգնեն իմանալ, թե որքան գումար է հարկավոր և նաև կօգնեն բանկին իմանալ, որ  
 իրենք խելացի ընտրություն են կատարում՝ հենց Ձեզ վարկ տալով: Նյութերը  
 պատրաստելուց հետո պետք է կապվել բանկերի և վարկային կազմակերպությունների  
 հետ՝ վարկ ստանալու համար: Մինչ այդ անհրաժեշտ է նախապես համեմատել տարբեր  
 բանկերի առաջարկները՝ վարկի համար առավելագույն հնարավոր պայմանները  
 ստանալու համար: Երաշխավորությամբ ֆինանսական ռեսուրսների ներգրավման  
 պայմաններն են՝

գումարը՝ առավելագույնը 5 մլն դրամ,


տարեկան տոկոսադրույքը՝ 10 %,

ժամկետը՝ առավելագույնը 5 տարի:



Ինչպե՞ս համեմատել երկու վարկ, որոնց տոկոսները նույնն են: Ինչպե՞ս հասկանալ՝ արդյոք տվյալ պայմաններով վարկը հարմար է, թե ոչ: Վարկային հաշվիչը կօգնի այս հարցերում՝ հաշվարկելով վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը (ՏՓՏ) և վարկի հնարավոր մարման գրաֆիկը: ՏՓՏ ցույց է տալիս վարկի իրական գինը՝ հաշվի առնելով

ոչ միայն տոկոսները, այլև վարկի հետ կապված այլ ծախսերը՝ վարկի տրամադրման և սպասարկման գծով վճարներ, ապահովագրական ծախսեր և այլ միջնորդավճարներ, եթե առկա են: **Որքան ցածր է վարկի ՏՓՏ, այնքան վարկը էժան է:**



Վարկի իրական գինը փոխվում է նաև կախված մարման տեսակից: Հավասար վարկ եղանակի դեպքում ամսական մարումների ժամանակ մայր գումարը հավասարաչափ է, իսկ տոկոսները գնալով նվազում են: Հավասար մարում եղանակի դեպքում ամսական վճարը (մայր գումար և տոկոսներ) նույնն է ողջ վարկի ընթացքում: Երկու եղանակներն

Էլ լայնորեն կիրառվում են: Հավասար վարկի դեպքում սկզբնական փուլում ամսական բեռը շատ է, հետո այն աստիճանաբար նվազում է: Հավասար մարման դեպքում ամսական մարման բեռը հավասարաչափ է բաշխված ողջ վարկի ընթացքում, սակայն տոկոսներն են մի քիչ շատ:

Փորձարկենք նույն պայմաններով և մարման տարբեր եղանակներով վարկեր և գտնենք ամենահարմարը՝ դիմելով վարկային հաշվիչի օգնությամբ:

### ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԳՐԱՖԻԿԸ

ՄԱՐՄԱՆ ՏԵՍԱԿ	ՀԱՎԱՍԱՐ ՄԱՐՈՒՄ	ՀԱՎԱՍԱՐ ՎԱՐԿ
ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐ	5 000 000 դ.	5 000 000 դ.
ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	10 %	10%
ՎԱՐԿԻ ԺԱՄԿԵՏԸ	5 ՏԱՐԻ	5 ՏԱՐԻ
ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	1%	1%
ԱՅԼ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	1%	1%
ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	32,8%	34,2%
ՎՃԱՐՎՈՂ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐ	1 270 833 դ.	1 374 113 դ.
ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	156 235 դ.,	ԱՄՍԱԿԱՆ ՄԱՐՈՒՄ ՎԱՐԿԻՑ 83 333 դ.
ԸՆԴԱՄԵՆԸ ՎՃԱՐՈՒՄ	9 320 833դ.	9 424 113 դ.

### 2.5.ՏՈԿՈՍԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

Ընտանիքում շատ կարևոր է ֆինանսների ճիշտ կառավարումը: Աշակերտների մոտ պետք է զարգացնել ստացված եկամուտը խելացի ձևով խնայելու, ծախսերը հաշվարկելու կարողություններն ու հմտությունները: Խնայելը կարևոր է, նույնիսկ եթե չունենք կոնկրետ նպատակ, կամ երբ եկամուտը լիովին բավարարում է մեր կարիքները: Այժմ եկեք անցկացնենք մի խաղ, որի միջոցով կստուգենք ձեր ֆինանսական գրագիտությունը...

<https://learningapps.org/watch?v=pndjn302t22>

Որոշ նպատակների իրագործման համար անհրաժեշտ է որոշակի գումար: Օրինակ՝ եթե ցանկանում ենք գնել բնակարան կամ ավտոմեքենա կամ մեկնել ճանապարհորդության, այն միանգամից իրականացնել չենք կարող, որովհետև դրանց արժեքները բավականաչափ գերազանցում են մեր եկամուտը: Ի՞նչպես վարվել... Անհրաժեշտ գումարը կուտակելու համար ամսական պետք է նախ տնտեսել եկամտի առնվազն 10%-ը, այնուհետև մնացածը ծախսել:

**ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆ – 10 / 90**

ԵԿԱՄՈՒՏ - 100%	ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ - 10%	ԾԱԽՍ - 90%
----------------	---------------------	------------

Խնայելը պետք է կարևորել նույնիսկ այն դեպքում, երբ չունենք կոնկրետ նպատակ, կամ մեր եկամուտը լիովին բավարարում է մեր կարիքները: Դա հնարավորություն է տալիս պատրաստ լինել անսպասելի ծախսերին: Տնտեսված գումարը կարող ենք պահել տանը՝ որևէ թաքստոցում: Այդ դեպքում այն մեզ համար «չի աշխատում», հակառակը՝ կարող է գնաճի պատճառով կորցնել իր արժեքը: Իսկ եթե գումարը որպես ավանդ ներդնենք բանկում, ապա կստանանք տոկոսային եկամուտ:



Ավանդ ընդունելով՝ բանկը պարտավորվում է վերադարձնել ինչպես ավանդի գումարը, այնպես էլ պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով դրանց դիմաց վճարել տոկոսագումար (այսպես կոչված՝ տոկոս): Ավանդները լինում են **ցայահանջ և**

**Ժամկետային:** Ցպահանջ ավանդի դեպքում գումարը և տոկոսագումարը կարող եք հետ ստանալ ցանկացած պահի՝ ըստ ձեր պահանջի: Ժամկետային ավանդի դեպքում գումարը և տոկոսագումարը տրամադրվում են նախապես պայմանավորված ժամկետում: Ավանդը ժամկետից շուտ վերցնելու դեպքում բանկը կարող է փոփոխել նախապես սահմանած տոկոսը: Այդ պատճառով, սովորաբար, **Ժամկետային ավանդի տոկոսն ավելի բարձր է, քան ցպահանջ ավանդինը:**

## ԿՇՈՒՂԱՏՄԱՆ ՓՈՒԼ

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### ՄԻՆՉ ԱՎԱՆԴ ՆԵՐԴՆԵԼԸ

- ✓ պետք է հստակեցնել ավանդի նպատակը, որպեսզի կարողանաք ընտրել ավանդի առավել հարմար տեսակը,
- ✓ պլանավորել բյուջեն՝ որոշել որքան կարող եք ամեն ամիս խնայել,
- ✓ համեմատել ավանդները և ընտրել ամենից շահավետ տարբերակը:

**Չիշեք՝** բանկը պարտավոր է իր կողմից առաջարկվող յուրաքանչյուր ավանդի համար ունենալ տեղեկատվական ամփոփագրեր:

Համեմատելիս պետք է ուշադրություն դարձնել հատկապես հետևյալ պայմաններին՝

- ✓ Անվանական տոկոս և տոկոսային եկամտաբերություն
- ✓ Ժամկետ
- ✓ Արժույթ
- ✓ Տոկոսի ավելացման ժամկետ
- ✓ Գումար ավելացնելու կամ հանելու հնարավորություն
- ✓ Ավանդի գումարը ժամկետից շուտ հետ վերցնելու պայմանները :

**ԱՎԱՆԴ ՆԵՐԴՆԵԼԻՍ մինչ պայմանագիր կնքելը ուշադիր և մանրամասն պետք է կարդալ պայմանագրում նշված կետերը:**

Վարկ վերցնելիս խորհուրդ է տրվում հետևել հետևյալ կանոններին՝

#### 1. ՎԱՐԿԻ ԿԱՆՈՆ – 30 / 70

Ըստ փորձագետների՝ վարկի ամսական մարումները չպետք է գերազանցեն Ձեր ամսական եկամտի 30-50%-ը: Հակառակ դեպքում խորհուրդ չի տրվում ընկնել վարկի բեռի տակ:



## **2. ԱՎՏՈՎԱՐԿԻ ԿԱՆՈՆ-20 / 4 / 10**

Ըստ փորձագետների մեքենան վարկով կարելի է գնել, եթե

- Ունեք **20%** կանխավճար,
- Ավտովարկը կարող եք մարել **4** տարում
- Վարկի ամսական մարումը ձեր ամսական եկամտի **10%**-ն է:

## **3. ՀԻՓՈԹԵՔԻ ԿԱՆՈՆ-30 / 3**

Ըստ փորձագետների հիպոթեքով տուն կարելի է գնել, եթե

- Հիպոթեքի ամսական մարումը ձեր ամսական եկամտի **30%**-ն է,
- Տան գինը չի գերազանցում ձեր տարեկան եկամտի եռապատիկը:

4. Մի ստորագրեք փաստաթղթեր առանց կարդալու;

5. Մի տարվեք վարկ ստանալու հեշտ պայմաններով:

Ինչքան ավելի քիչ փաստաթղթեր են ձեզանից ուզում վարկ ստանալու համար, այնքան ավելի թանկ է լինելու վարկը:

6. Մի վերցրեք ձեզ պետք եղած գումարից ավելին:

7. Մի վերցրեք ձեր անունով վարկ ուրիշի համար:

8. Լիցենզիա չունեցող կազմակերպությունների հետ գործարքներ մի կատարեք:

Ամենաձեռնտու ֆինանսական ծառայությունը գտնելու և այլ գործիքներից օգտվելու համար կարող եք այցելել [www.abcfinans.am](http://www.abcfinans.am) կայք:

## **ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այս աշխատանքի միջոցով մենք ցույց տվեցինք, որ տոկոսը մեր կյանքի մշտական ուղեկիցն է, թե ինչքան կարևոր և անհրաժեշտ են տոկոսների վերաբերյալ գիտելիքները: Պետք է ամեն ինչ անենք, որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն տոկոսային հաշվարկներ կատարելու կարողություններ և հմտություններ: Նրանք պետք է կարողանան օգտագործել իրենց ստացած գիտելիքները ոչ միայն ուսումնական և ճանաչողական գործընթացներում, այլ նաև առօրյա կյանքում: Այսօրվա սերունդը պիտի ունենա ֆինանսական գրագիտություն, պիտի տարբերակի կարիքն ու ցանկությունը, որպեսզի կարողանա ճիշտ կառավարի իր ֆինանսները, իսկ ապագայում նաև ընտանեկան բյուջեն ու բիզնեսը, ֆինանսական գործունեությունը: Այդ ամենի

արդյունքում մեր աշակերտներն ուսումնական ավարտելուց հետո կկարողանան անձնական ֆինանսների հետ կապված ինքնուրույն և արդյունավետ որոշումներ կայացնել:

### **Կառավարել ձեր փողը, որպեսզի փողի պակասը չկառավարի ձեզ:** :

Հայաստանի բնակչության մեծամասնությունը կարևորում է բյուջեի պլանավորումը, սակայն 1/3-ից ավելին գործնականում չի պլանավորում: Անկանխատեսելի դեպքերին պատրաստ լինելու համար հարկավոր է ամեն ամիս խնայել եկամտի 10%-ը՝ անմիջապես գումարը ստանալուն պես, իսկ վարկեր վերցնելիս օգտվել վերը նշված կանոններից՝ ԿԱՐԿԻ ԿԱՆՈՆ – 30 /70 , ԿՎՏՈՎԱՐԿԻ ԿԱՆՈՆ-20/4/10, ՀԻՓՈԹԵՔԻ ԿԱՆՈՆ-30/3 :

Բյուջեի ճիշտ կառավարման հմտությունը հետագայում կօգնի աշակերտներին հեշտորեն հաղթահարել ֆինանսական բարդ իրադրությունները և հասնել ցանկալի նպատակներին:

Ֆինանսական կրթությունը կենսական անհրաժեշտություն է յուրաքանչյուր մարդու համար և անկասկած ազդում է մարդու բարեկեցության վրա:

### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**



Բ.Ս.ՆԱՅԱԴԵՏՅԱՆ, Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 'ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 6'

'ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՑ' ձեռնարկ, հրատարակված FININFO կազմակերպության կողմից

### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀՂՈՒՄՆԵՐ**

<https://www.abcfinance.am/deposit.html>

<https://learningapps.org/display?v=pnoq95ym222>

<https://learningapps.org/watch?v=pndjn302t22>